

ՂԵՒՈՆԳ ԱԼԻՇԱՆ ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

Ջեկուցման վերնագիրը փոխ ենք առել նոյն Ղ. Ալիշանի նշանատր մի գրքից՝ «Շնորհալի եւ պարագայ իւր»: Եւ այդ վերնագիրը հիմնաւորելու եւ արդարացնելու համար հարկ ենք համարում նախ անդրադառնալ այն պայմաններին՝ գիտական, ազգային, կազմակերպական, որ Ղեւոնդ Ալիշանեանին դարձրեցին նախ Նահապետ, ապա եւ Ղեւոնդ Ալիշան:

Մխիթարեան միաբանութիւնն արդէն իսկ ժ.թ. դարի երկրորդ կէսին ունէր այնպիսի հզօր մի ամբիոն, ինչպիսին «Բագմալէպն» էր, տպարան, ուր բազմաբնոյթ ու բազմաթիւ հայագիտական գրքեր էին հրատարակուել, թանգարան, ուր պահուում էին նաեւ հայոց պատմութեան անցեալը ցուցադրող նիւթեր, գրադարան՝ իր հայերէն եւ օտարալեզու գրքերով, ձեռագրատուն՝ իր բանասէրների գոնէ նուազագոյն պահանջները բաւարարող ձեռագիր մատեաններով: Միով բանիւ՝ այն բոլոր անհրաժեշտ պայմանները, որոնք ստեղծում էին գիտական մթնոլորտ: Ղ. Ալիշանի դերն ու նշանակութիւնը թերի հասկացուած կը լինի, քանի դեռ չեն ներկայացուած կազմակերպական, հոգեւոր, գիտական, քաղաքական այն պայմանները եւ բարոյական աջակցութիւնը, որոնք ծնեցին «Ալիշան» կոչուող երեւոյթը:

ժ.թ. դարի երկրորդ կէսի Մխիթարեան Միաբանութիւնը Վենետիկ տեղափոխուել էր՝ իր հիմնադրման մէկուկէս դարեայ գոյութիւնը բոլորելով, ջանացել էր ապահովել իր ինքնուրոյնութիւնը, ընդարձակել Ս. Ղազար կղզին, թարգմանել ու հրատարակել այնպիսի գրքեր, ինչպիսիք են Թովմա Գեմբացու «Աստուածաբանութեան բովանդակութիւնը», Կովդոնի իմաստասիրական-աստուածաբանական երկերը, Թեսալոնի «Բարոյական իմաստասիրութիւնը», Ռոլենի «Հոովմէական պատմութիւնը»,

նոյն թովմա Ակուինացու քրիստոսաբանական գործերը, իսկ հայ հեղինակներից Արսէն Բագրատունու, Միքայէլ Չամչեանի, Գաբրիէլ Աւետիքեանի, Ղուկաս Ինճիճեանի, Մկրտիչ եւ Յարութիւն Ազգերեանների, Մանուէլ Ջախջախեանի քերականութեան, պատմութեան, գրականութեան, տեղագրութեան, բանասիրութեան զանազան հարցեր արծարծած, այսօր էլ իրենց գիտականութիւնն ու կենսունակութիւնը չկորցրած երկեր: Մի կողմ թողնենք Վրթանէս Ասկերեանի հայոց լեզուի առթիւ արտայայտած անհիմն զմայլանքը (Մխիթարեան Յոբելեան, էջ 74), բայց նաեւ չուրանանք, որ Մխիթարեան հայերն էին, որ կանոնաւորեցին ԺԸ-ԺԹ դդ. հայերէնը, որովհետեւ քաջատեղեակ էին այդ ժամանակաշրջանի լատիներէնին, Փրանսերէնին, հին յունարէնին: Գոնէ մասամբ հանդարտուել էին դաւանաբանական յարանուանութեան ներկայացուցիչների միմեանց նկատմամբ հասցեագրուած մեղադրանքները: Շնորհիւ Կարլին արքեպիսկոպոսի ջանքերի, միաբանութեան Սահմանադրութիւնը ընդունելի էր ճանաչուել՝ ապահովելով միաբանութեան ինքնուրոյնութիւնը: Մխիթար Սեբաստացու մահից յետոյ մասնաւորաբար աբբա՛օր գահին էին նստել Ստեփանոս Մելգոնեանը, Ագոնցը, Սուքիաս Սոմալեանը, Գէորգ Հիւրմիւզը, Իգնատիոս Կիւրեղեանը՝ գիտական ու կազմակերպական տարբեր ունակութիւններու աբբահայրեր, բայց միշտ միասնական՝ միաբանութիւնը կուռ եւ յարատեւ պահելու նախանձախնդրութեամբ: Անտես պիտի չանել նաեւ անձնական պարագան. յատկապէս Ղեւոնդ Ալիշանի դէպքում նրա աշխատասիրութիւնը, նուիրուածութիւնն ու սէրը այն գործի նկատմամբ, որին նա փարուել էր կամովին եւ վերին կոչումով: Իր ժամանակակիցները իրենց յուշերում միաբերան դա են վկայում:

Եթէ օտարազգի գիտնականները, ի մասնաւորի Փրանսացիները ծանօթացան հայ մատենագրութեանը, ճարտարապետութեանը, պատմութեանն ու աշխարհագրութեանը եւ ըստ արժանւոյն գնահատեցին դրանք, ապա առաջին հերթին դրա համար պարտական ենք գերազանցապէս Ղեւոնդ Ալիշանին: Անվարան կարելի է ասել, որ Դիւլորիէն, Բրոսսէն հայագէտներ են դարձել շնորհիւ Ղեւոնդ Ալիշանի: Մխիթարեան միաբանութեան Եւրոպայում տարածուած հռչակի մասին վկայում է այն փաստը, որ Վենետիկի Մխիթարեան միաբանութիւն են այցելել այնպիսի դէմքեր, ինչպիսիք են Կորչակովը, Աղեքսանդր Բ. կայսրը, Ադոլ

Թիերին, Նապոլեոն Բոնապարտը, Բայրոնը, Լանգլուան, էլէոնորա Դուգէն, Մարգարիտ Թագուհին, սրանց դիրքին ու հեղինակութեան գրեթէ չզիջող պալատական այրեր, գիտութեան ու մշակոյթի գործիչներ, որպէսզի իրենց համակրանքն ու աջակցութիւնը ցոյց տան այս կենտրոնի ու նրա անդամների նկատմամբ: Նախանձախնդրութիւնը պահանջում էր արժանի լինել այդ համակրանքին ու յոյսին:

Ղեկոնդ Ալիշանն իր գործունէութիւնն սկսած իբրեւ բանաստեղծ: 1857-1858 թթ. նրա հրատարակած «Նուազք» հինգհատորեակի անգամ խորագրերը ոչ միայն յանգաւորուած են, այլեւ իմաստալից. Մանկունի, (իւր Մաղթունի Խոհունի եւ Բնունի բաժիններով), Հայրունի, Տէրունի, Տխրունի: Գրականագէտները եւ արուեստի պատմաբանները միաբերան խոստովանում են, որ հայ նոր գրականութեան հիմնադիրների մէջ, ի թիւս այլոց, պիտի յիշատակել նաեւ Ղեկոնդ Ալիշանի անունը, որովհետեւ նա իր ուրոյն մտածելակերպով նոր թեմա, շունչ ու արուեստ բերեց հայ գրականութեանը. Նահապետը երգեց ոչ միայն Արարչին, այլեւ նրա ստեղծած բնութեան գեղեցկութիւնը, նաեւ Հայրենիքը, Արի արանց հաւատը ապագայի նկատմամբ, Գունդեգունդ յառաջ գնալու տենչն ու թափը:

Ղեկոնդ Ալիշանի ֆնարերգութեան առաջին շրջանին յատուկ է անձի եւ բնութեան միասնութիւնը: Արեգակը եւ արշատոյսը ծառայում են մարդու տրամադրութիւնը բարձրացնելուն, հոգեկանը հարստացնելուն: Թող որ բանաստեղծի յանգերը երբեմն հնչեն արհեստական վարդ - երփնագարդ, թեթեւ - ոսկեթեւ, զուարթուն - կենսատուն: Ի պատիւ հեղինակի, սակայն, վերջին պարագան աստիճանաբար նուազում է, եւ յանգերը տեղի են տալիս գաղափարին: Երբ բանաստեղծութեան առանցքը դառնում է սէրն ու հաւատը գալիքի նկատմամբ, Ղ. Ալիշանի բանաստեղծութիւնն ստանում է այլ երանգ: Յուսահատութեանը փոխարինելու է գալիս հաւատը, եւ հաւատից աւելի գերիշխող է դառնում կոչը. «Ձայն տուք. ելէ՛ք հայրենասէրք ի հանդէս ... է դառնում կոչը. «Ձայն տուք. ելէ՛ք հայրենասէրք ի հանդէս ... Նոր Հայաստան մեօք յարիցէ լուսատես»: Ահա եւ ժամանակի, այսօրուան համահունչ խօսք: Իրականութեան եւ անձնականի հակասութիւնը այնպէս է շեշտուած Ղ. Ալիշանի վաղ շրջանի բանաստեղծութիւններին մէջ, որ Մխիթարեան ոչ մի գործչի

քնարական երկերում չենք տեսնում, եթէ չհաշուենք աշխարհիկ քնարերգուներին:

Ղ. Ալիշանի իբրեւ գրողի մասին խօսելիս չի կարելի անտեսել նրա լայնախոհութիւնը: Նա պանծացրեց օտարազգի Շիլլերի եւ Բայրոնի անունները հայ իրականութեան մէջ, բայց երբեք էլ այլ հեղինակներին չդիտեց լոկ գերմանացի կամ անգլիացի գործիչներ, այլ իբրեւ համաշխարհային գրականութեան անբաժանելի մաս ճիշտ այնպէս, ինչպէս Ներսէս Շնորհալին, Սմբատ Գունդստաբլն ու Վարդան Արեւելցին՝ սոսկ հայկական միջավայրի ծնունդ հանդիսացող հեղինակներ: Ղ. Ալիշանը կարողացաւ ցոյց տալ, որ վերոյիշեալ հեղինակները իրենց գրական ու գիտական աւանդն են՝ մոռնել համաշխարհային մշակոյթի, գիտութեան ու պատմագրութեան ասպարէզներում: Սա Ղ. Ալիշանի առողջ ազգասիրութեան ցայտուն դրսեւորումն է:

Ղ. Ալիշանի գործունէութեան պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ են զբաղեցնում, «Սոփերք հայկականք»ը եւ «Բագմավէպ»ը: Առաջինի հիմնադրումն ու հրատարակութեան իրականացումը, երկրորդի՝ հայ պարբերական մամուլը գիտական բարձրագոյն մակարդակի բարձրացնելու, դրա միջոցով մի ամբողջ գիտական ու գրական սերունդ դաստիարակելու երախտիքը բաւական էին Ղ. Ալիշանի անունը հայ բանասիրութեան հսկաների շարքին դասելու համար:

Ղ. Ալիշանն իրեն դրսեւորեց իբրեւ հմուտ բանասէր ու գրականագէտ: Իր «Շնորհալի եւ պարագայ իւր» երկը ԺԹ դարի հայ բանասիրութեան ու գրականագիտութեան փայլուն օրինակներից է, որովհետեւ նա նախ ի մի բերեց Ներսէս Շնորհալու երկերը եւ ապա ժամանակի մակարդակով ու թոյլատրելի հնարաւորութիւններով վերլուծեց դրանք իմացաբանօրէն ու բանասիրական տեսանկիւնից: Ներսէս Շնորհալու մերօրեայ բանասէրները, բնագրագէտ, աստուածաբան թէ երաժիշտ, իբրեւ մեկնակէտ նկատի են առնում Ղ. Ալիշանի այս գրքում արտայայտած դրոյթները: Մէկդի դնելով նախ այս գործի գիտական արժէքը, նախ ուզում ենք ընդգծած լինել Ղ. Ալիշանի գործչի ոգին ըմբռնելու բացառիկ կարողութիւնը: Ղ. Ալիշանը, Ն. Շնորհալուն դնում է Դանթէի, Կոպեռնիկոսի, Մոլիերի կողքին, նշելով, որ Ն. Շնորհալու յոբելեանն էլ արժանի է նշելու: Սկսելով Շնորհալու ծննդաբանութիւնից, Ղ. Ալիշանը մատենագրական

տուեալների հիման վրայ հիմնուելով կազմուած է Պահլաւունիներէ տոհմածառը, վերլուծուած Ն. Շնորհալու տաղաչափական առանձնայատկութիւնները (քերթողական ճարտարապետութիւն), ցոյց տալիս դրա սերտ աղերանները ժողովրդական հնագոյն բանաստեղծութեան հետ, դրա դերը հայ շարականագրութեան (բանաստեղծական եւ երաժշտական) ասպարէզում: Ն. Շնորհալու եկեղեցական, մանաւանդ կաթողիկոսական շրջանի գործունէութիւնը քննարկման նիւթ է դառնում առանց կողմնակալութեան դոյզն իսկ նշանի: Արեւիդեաց, բորբորիդների, մծղնեականների, պաւլիկեանների, թոնդրակեցիների դէմ Ն. Շնորհալու պայքարը Ղ. Ալիշանը դիտարկում է իբրեւ ժամանակի պահանջ, գրեթէ նոյնքան անհրաժեշտ, որքան Հայ եւ Յոյն եկեղեցիների յարաբերութեան անհրաժեշտութիւնը: Ահա եւ Ն. Շնորհալու գործունէութեան Ղ. Ալիշանի գնահատականը, որ սպառնիչ է. «Թէ՛ այս թղթին, եւ թէ՛ ուրիշ թղթոց մէջ հաւասար կը փայլէ մեր հայրապետին շնորհքն խոհեմութեան, խոնարհամտութեան, քաղցրութեան, արդարասիրութեան, միանագամայն եւ պաշտպանելու իր ազգն ու եկեղեցին, առանց ուրիշի դպչելու կամ յայտնի պակասութիւն մը ջատագովելու: Ասոնց հետ մէկտեղ՝ վսեմական արժանապատուութիւն մ՛ալ: Իսկ յունաց թէ՛ կայսեր, եւ թէ՛ պատրիարքին թըղթոց մէջ բաւական չափաւորութեան մը հետ՝ տիրական եւ իշխանական ոգի մ՛ալ չի ծածկւելիր» (էջ 433): Ղ. Ալիշանն ընդգծում է Ն. Շնորհալու նաեւ այն յատկութիւնը, որ նրան տարբերում է Գրիգոր Տղայից ու Ներսէս Լամբրոնացոց. «Գրիգոր Տղայ եւ Լամբրոնացին աւելի յայտնի եւ համարձակ կը խօսին այս խնդրոյս վրայ, սակայն Շնորհալոյ չափ պարահայեաց տեսութիւն եւ փափկութիւն չունենալով՝ չկարցան շահիլ հիւսիսային վարդապետները» (434): Ն. Շնորհալու կերպարն ամբողջացնելու համար Ղ. Ալիշանն անդրադառնում է նաեւ իր հերոսի մարդկային առաքինութեանը. «Այս անձնուրացաբար անհերոսի մարդկային առաքինութեանը. «Այս անձնուրացաբար անհերոսի տիրանալն, եւ իբրեւ իրմէ դուրս զինքը շարժել եւ ուղղելն որպէս կառավար մը զկառս եւ զերիվարս եւ զբարեխառնութեան կամ արդարութեան կշիռն անվրէպ բռնելն, Ներսիսի գերագոյն շնորհքն է, որով եւ անմասն անձ մը, սուրբ մը, վեհ մը պէտք է ճանչցուի» (478): Այդքան մանրամասն վերլուծելուց, Ն. Շնորհալու ձեռագիր եւ տպագիր երկերը ի մի բերելուց, ըստ արժանւոյն գնահատելուց յետոյ Ղ. Ալիշանը իր գործին վերջակէտ է

դնում միայն իրեն յատուկ համեստութեամբ. «Ցաւելով, որ չկարցանք ո՛չ աւելի յիշատակներ գտնել իր վարուց եւ գործոց, եւ ո՛չ արժանապէս բացատրել գտածնիս» (479):

Ուսումնասիրութեան յատուկ նիւթ են Ղ. Ալիշանի մանկավարժական հայեացքները: Ընտանիքը, ըստ Ղ. Ալիշանի, դիտւում է այն դարբնոցը, ուր դաստիարակութեան առաջին դասեր է ստանում երեխան: Իբրեւ յաջորդ փուլ նկատի են առնւում ծնողական գուրգուրանքն ու դաստիարակութեան առաջին պայմանները, որոնց «... ետեւի եկող վարպետները (= իմա ուսուցիչները) մեծ յաջողութեան պատճառ պիտի ըլլան» (Հայ Դասականների գրադարան, Ղ. Ալիշան, 123): Յիշենք հեղինակի թեւաւոր խօսքը. «Առաջին դաստիարակ մանկանց՝ աչք մարց իւրեանց»: Այս գաղափարը Ղ. Ալիշանը զարգացնում է մի քանի այլ յօդուածներում եւս:

Ղ. Ալիշանի տեղագրական երկերին պիտի անդրադառնալ յատուկ երկիւղածութեամբ: Եկեղեցիների, վանքերի, բնակավայրերի, կամուրջների, քարվանսարանների, տարազների, աւերակների, վիմագիր արձանագրութիւնների եւ տասնեակ ու տասնեակ այլաբնոյթ յատակագծերի, տոհմածառերի՝ գրքերում բերուած նկարները այսօր ձեռք են բերում վաւերական սկզբնաղբիւրի արժէք, իսկ քարտէզներն իրենց ճշգրտութեամբ ու մանրամասնութեամբ՝ իրենց լծերով, լեռներով, գիւղերով, տեղադրութեամբ ու հեռաւորութեան ճշգրտութեամբ կասկած չյարուցող վաւերագրեր: Հրապարակի վրայ են տեղագրական վեց երկերը՝ Արցախը, Այրարատը, Սիսուանը, Սիսականը, Վասպուրականը, Շիրակը, տեղագրական հանրագիտարաններ լինելուց բացի հայրենասիրութեան իրաւ դասագրքեր:

Որքան մենք նկատել ենք, Ղ. Ալիշանի մեծածաւալ գործերին, ինչպիսիք են Այրարատը, Սիսուանը, Սիսականն ու Շիրակը, նախորդել են դրանց առաւել համառօտ տարբերակները ճիշտ այնպէս, ինչպէս գեղանկարիչները կատարել են իրենց նախ գլուխգործոցների ճեպանկարները, որից յետոյ իրենց հռչակ բերող մեծ կտաւները: Այսպէս. Ալիշանի նշանաւոր կոթողային գործերին նախորդել են «Աշխարհագրութիւն»ը (1851), «Քաղաքական աշխարհագրութիւն»ը (1853), «Տեղագիր Հայոց Մեծաց»ը (1855), որի յետոյ միայն «Աշխարհագրութիւն»ը եւ «Շիրակ»ը (1890), «Սիսական»ը (1893), իսկ «Սիսուան»ին (1885)՝

նոյն թուականի «Համառօտութիւն Միսուանայ» (յարաբերաբար 592 եւ 117 էջեր): Ղ. Ալիշանի ինչպէս բոլոր գործերի յիշատակած տեղագրական երկերի ծանօթագրութիւնները, նոյնպէս երբեմն նոյնքան կարեւոր են ու գիտականօրէն յագեցուած, որքան բուն ուսումնասիրութիւնը: Իբրեւ օրինակ կարելի է բերել «Հայաստանը յառաջ քան զլինելն Հայաստան» երկը (Վենետիկ, 1904, էջ 249-290), որտեղ նշուած հեղինակների մինչեւ ժԹ դարի առաջին կէսը տպագրուած գրքերը հայագիտական մատենագիտութիւն կազմելու չափ նիւթեր են պարունակում:

Ղ. Ալիշանի գրական-գիտական ժառանգութիւնն ինքնին պատկառելի է: Միայն իր օրօք՝ 50 տարիների ընթացքում տպագրուած գրքերը, լինեն դրանք բանասիրական, գրականագիտական, գրական թէ թարգմանական, հասնում են հարիւրի, չհաշուած անանուն, իրեն վերագրուող գործերը: Այդ երկերում գրեթէ սպառիչ կերպով անդրադարձ է լինում հայ եւ օտարագգի այն հեղինակներին որոնք թեր կամ դէմ կարծիք են յայտնել հայ ժողովրդի պատմութեան, լեզուի, կամ մշակոյթի մասին: Ղ. Ալիշանը կուրօրէն չի հաւատում յաւուր պատշաճի ասուած թէկուզ դրուատական խօսքերին. նա ըստ անհրաժեշտութեան կամ հակառակ փաստարկն է բերում, կամ, ընդհակառակը, մատենագրական փաստերով ինքն է հիմնաւորում այլոց, մանաւանդ օտարների ասած դրուատական խօսքը:

Ղ. Ալիշանը ձեռնարկած ամէն մի գործի համար ներդրել է ժամանակ, սէր, բծախնդրութիւն, հարցերը հնարաւորին չափ աւարտուն եւ սպառիչ դարձնելու կամք ու ջանք, երբեք չի գոհացել իր ամբարած գիտելիքներով, մեղուի ջանասիրութեամբ հաւաքած նիւթերով, եթէ նոյնիսկ թուացեալ աւարտուն տեսքի է բերուել որեւէ գործ:

Այլ խօսակցութեան նիւթ է Ղ. Ալիշանի անտիպ գործերի հրատարակութիւնը: Հաշուենք այն մտքի հետ, որ իր իսկ պահանջով ու պնդմամբ հրոյ ճարակ են դարձել մի քանի ձեռագրեր՝ ոտանաւորներ լինեն դրանք, թէ այլ գործեր (տե՛ս Ալիշանը իր ժամանակակիցների յուշերում, 1974, էջք 125, 126): Հրատարակութեան կարօտ են Ղ. Ալիշանի այն երկերը, որոնք ունեն ընդհանրական, տեղագրական բանասիրական բնոյթ կամ նամակներ: Նրա մի քանի անտիպ գործերը նոր էջ կարող են բանալ եւ լոյս սփռել Ղ. Ալիշանի կենսագրութեան ու գիտական գոր-

ծունէութեան վրայ: Հրատարակէինք թէկուզ նրա ճառերը (Կենսագրութիւն, էջ 103), նամակները, «Կենսագրութիւն Հ. Ալիշանի» երկի հեղինակը առանձին գլուխ է յատկացրել Ղ. Ալիշանի անտիպ գրքերի, դրանց բովանդակութեան ու գիտական արժէքի մասին: Այդ գլուխը կարելի է իբրեւ աշխատանքային ծրագիր ընդունել Ղ. Ալիշանի անտիպ երկերը հրատարակելու համար: Ղ. Ալիշանի մատենագիտութիւնը կազմած հեղինակը նրա ստեղծագործութիւնները ներկայացրել հինգ ճիւղերով միայն. Բանաստեղծականք, Մատենագրականք, Աշխարհագրականք, Պատմականք, Բանասիրականք եւ Կրօնականք: Թերի է: Թերի է թէկուզ այն առումով, որ դուրս են մնացել մանկավարժական (դասագրքեր, ընթերցանութեան նիւթեր), արուեստագիտական, ձեռագրագիտական բնոյթի երկերը, բուսաբանութեանը, երկրաբանութեանը վերաբերող մեծ ու փոքր գրքերը, նամականին: Բացի այդ՝ դուրս են մնացել «Բազմավէպ»ի տասնեակ ու տասնեակ համարներում տպագրուած (թէկուզ անստորագիր) յօդուածները, եւ, մանաւանդ, թարգմանութիւնները Փրանսերէնից, իտալերէնից, արաբերէնից, ու նաեւ գրաբարից: Բարեբախտաբար ներկայ ժամանակների թելադրանքով հրատարակուեց Ղ. Ալիշանի «Արցախ»ը: Այլ հարց, թէ ինչու թարգմանաբար:

Զմայլում ենք օտար հեղինակների՝ Լաոռչֆուքոյի, Բայրոնի, Գէօթէի եւ այլոց թեւաւոր խօսքերով, անտեսելով որ նմանտիպ եւ նոյնարժէք խօսքեր ունի նաեւ մերազնեայ հեղինակը. «Աշխատութիւն մի անգամ խոնարհեցուցանէ, դատարկութիւնն՝ հանապազօր», «Տարի բոլորեալ՝ սիւն մի խորտակեալ ի տաճարի ժամանակիս», «Առաջին դաստիարակ մանկանց՝ աչք մարց իւրեանց», «Պարտոցաւոր է լեզու քսուին, այլ զանձն մաշէ»:

Մեր այս գեկուցումն աւարտելոց առաջ ուզում ենք երախտիքի խօսք ուղղել Սուրէն Շտիկեանի հասցէին, որն անուրանալի վաստակ ունի Ղ. Ալիշանի որոշ երկեր հրատարակելու եւ ուսումնասիրելու գործում: Այս գեկուցմամբ Ղ. Ալիշանի գրական-գիտական համառօտ ակնարկը ներկայացնելով ընդգծել ուզեցինք նրա վաստակի արժէքը: Երկրորդ՝ ուզեցինք ցոյց տալ նրա անտիպ երկերը հրատարակելու անհրաժեշտութիւնը: Երրորդ՝ ուզեցինք յիշեցնել որ յաջորդ տարի լրանում է այդ մեծ գիտնականի եւ մարդու մահուան հարիւրամեակը եւ, հետեւաբար անհրաժեշտ է յաւուր պատշաճի դիմաւորել այլ յոբելեանը նրա անտիպ

գործերի հրատարակութեամբ, գիտական նստաշրջանով կամ համահայկական որեւէ այլ միջոցառմամբ:

Մնում է հետեւել Ղ. Ալիշանի թեւաւոր խօսքի այն խորհրդին, թէ «խօսիլն վայելուչ է, լռելն իմաստուն, գիտելն ցժամանակ խօսելոյ եւ լռութեան՝ սքանչելի»:

ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՆԵԱՆ